# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 օգոստոսի 2021 թվականի N 342-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ, ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ /ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ/ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի N 183-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 702-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 805-Ն որոշումների և ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 24-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով,

**որոշում եմ.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպութան միջև կնքված միաձուլման պայմանագիրը:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու հետևյալ կարգն ու պայմանները.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի սույն որոշմամբ հաստատված փոխանցման ակտերի համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները հանձնում են, իսկ «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ընդունում է կազմակերպությունների առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, հաշվարկները, գույքը, այլ գույքային իրավունքները, պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունները: Հանձնում–ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման արդյունքում համարվում են վերակազմակերպված «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաթևի առողջության կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

5.Հաստատել «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

6.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության և առողջապահության և սոցիալական ապահովության վարչության վրա:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 17-ի N 183-Ա որոշումը:

25.08.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. օգոստոսի 25
ք. Կապան